ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՃԱՄՊՐՈՒԿ 2022» լրագրողական ամենամյա մրցույթ

Հայաստանի միգրացիոն ծառայությունը, ՄԱԿ-ի Փախստականների գործակալությունը եւ «Մարդը կարիքի մեջ» միջազգային կազմակերպությունը շարունակում են **«ՃԱՄՊՐՈՒԿ» ամենամյա լրագրողական մրցույթի** ավելի քան տասնամյա ավանդույթը:

Այս տարի մրցույթին կարող են ներկայացվել 2021 թ. դեկտեմբերի 1-ից մինչեւ 2022 թ. նոյեմբերի 27-ն ընկած ժամանակահատվածում հրապարակված նյութերը՝ հետեւյալ թեմաներով.

- ապաստանի համակարգ. փախստականներ, միջազգային պաշտպանություն և ինտեգրում.
- միգրացիոն գործընթացներ եւ միգրանտներ.
- քաղաքացիություն չունեցող անձանց խնդիրներ.
- վերադարձ, վերաինտեգրում.
- տեղահանություն և տեղահանված անձանց խնդիրներ:

Մրցույթին կարող են մասնակցել հեռուստատեսության, ռադիոյի, տպագիր մամուլի, էլեկտրոնային մեդիա ոլորտի բոլոր ժանրերում գործունեություն ծավալող լրագրողներ եւ թղթակիցներ, անկախ բլոգերներ, լուսանկարիչներ, մուլտիմեդիայի մասնագետներ:

Ուշադրություն. անվավեր կհամարվեն այն նյութերը, որոնք մշակվել են դրամաշնորհային ծրագրի շրջանակում՝ վճարովի հիմունքներով:

Ներկայացված աշխատանքները կգնահատվեն ժյուրիի կողմից, ինչի արդյունքում կազդարարվեն **1-ին, 2-րդ եւ 3-րդ մրցանակների հաղթողները**: Մրցանակաբաշխությունը տեղի կունենա 2022 թ. դեկտեմբերին (եւ կնվիրվի Միգրանտների միջազգային օրվան):

Նյութերն անհրաժեշտ է ուղարկել մինչեւ 2022 թ. դեկտեմբերի 4-ը, ժ. 23:59, էլ-փոստի ghalamka@unhcr.org **հասցեով՝ պարտադիր նշելով հետեւյալը.**

- հեղինակի անունը եւ ազգանունը, հեռախոսի համարը, էլ-փոստի հասցեն,
- հրապարակման ամսաթիվը, հղումը, հեղինակության լրացուցիչ հիմնավորում (եթե մասնակիցը տեսնում է դրա կարիքը), լրատվամիջոցի անվանումը:

Հարցերի դեպքում խնդրում ենք զանգահարել 095 005 313 (Արամազդ Ղալամքարյան, ՄԱԿ ՓԳՀ) կամ 091 52 02 54 (Նելլի Դավթյան, Միգրացիոն ծառայություն) հեռախոսահամարներով:

«ՃԱՄՊՐՈՒԿ 2022» լրագրողական մրցույթի նպատակը թեմատիկ լուսաբանման ոլորտում լավագույն փորձը խրախուսելն է: Հայաստանում փախստականների, տեղահանված անձանց և միգրանտների ու նրանց ինտեգրման գործընթացների վերաբերյալ գրագետ եւ ազդեցիկ մեդիա բովանդակությունը քաջալերելով՝ նպատակ ունենք ոգեշնչելու լրագրողներին՝ առավել ընդգրկուն, ճշմարիտ եւ անաչառ մոտեցումներ ցուցաբերելու տեղահանված անձանց և միգրանտների վերաբերյալ լրագրության և լուսաբանման գործում: